Սուբսիդավորումը պետք է ուղղված լինի՝

- գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների համալրմանը, որը կօգնի գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջարկի խթանմանը՝ բարձրացնելով գյուղմթերքների բերքատվությունը,
- չօգտագործվող և ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող վարելահողերի տարածքների կրճատմանը,
- հողային և աշխատանքային ռեսուրսների օգտագործման մակարդակի և արդյունավետության բարձրացմանը,
- սննդի, վերամշակող արդյունաբերության հումքային բազայի և արտադրության ծավալի կայունացմանը, որը կնպաստի հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը,
- նախընտրելի մասնագիտությունների ձևավորմանը և շուկայի պահանջներին համապատասխան արտադրության ծավալների կարգավորմանը:

Սուբսիդավորման գործընթացի իրականացումը պահանջում է գործուն մեխանիզմների կիրառում, քանի որ այն առնչվում է գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների հետ, որոնք ունեն տարբեր մասնագիտացումներ և արտադրում են բազմազան գյուղատնտեսական մթերքներ:

Հաշվի առնելով ագրովերամշակման արտադրանքների շուկայական պահանջարկը և մրցունակությունը, անհրաժեշտ հումքային բազայի առկայության դեպքում, կարելի է ճիշտ որոշել վերամշակվող սուբյեկտների ուղղվածությունը և տեղաբաշխումը: Այն կլուծի մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- ներքին շուկան տեղական արտադրանքի բարձրորակ և մրցունակ պարենամթերքով ապահովումը,
- տեղական հումքի արդյունավետ օգտագործումը,
- տարածաշրջանների միջև գոյություն ունեցող անհամաչափությունների հաղթահարում և տնտեսավարման համագործակցության զարգացում:

Երկրի տնտեսության՝ այդ թվում ագրոարդյունաբերական համակարգի հետագա զարգացման համար կարևորվում է տարածաշրջանային զարգացման անհրաժեշտ համամասնությունների պահպանումը:

ՀՀ տարածաշրջանների տնտեսական զարգացման մակարդակի միջև առաջացած անհամամասնությունների հաղթահարման համար անհրաժեշտ է.

- ավանդական հատվածների վերականգնում և զարգացում մինչև տնտեսական նոր հատվածի առաջացումը,
- անհրաժեշտ պայմանների ստեղծում թույլ զարգացած տարածաշրջանների առաջանցիկ տեմպերով զարգացման համար,
- մասնավոր հատվածի համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում և ներդրումային դաշտի բարելավում,
- սահմանամերձ գոտու բնակավայրերի ամրապնդում,
- լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի և թույլ յուրացված տարածքների զարգացման հնարավորություն:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հանրապետությունում սոցիալ – տնտեսական դժվարությունների աստիճանաբար հաղթահարումը պայմաններ ստեղծեց անցումային փուլում մշակել որոշակի քաղաքականություն և իրականացնել գործնական միջոցառումներ՝ գյուղատնտեսությունը ծանր վիճակից դուրս բերելու համար: Նոր պայմաններին համապատասխան, ընդունվեցին մի շարք օրենքներ, մշակվեցին և գործողության մեջ դրվեցին տնտեսական հարաբերությունները կարգավորող մեխանիզմներ, զգալիորեն աճեց կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը, մեծացան պետական բյուջեից կատարվող հատկացումները, վերագործարկվեցին ու զարգացում ստացան գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկությունները և այլն, որոնց շնորհիվ զարգացման միտումներ ձեռք բերեց գյուղատնտեսական արտադրությունը, որը պայմանավորված է գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացման մակարդակով:

1. **Բուսաբուծության զարգացումը.** Շարադրելով գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացմանը վերաբերվող մեր մտորումները, տեղին է նշել, որ բուսաբուծությունում գլխավոր հիմնահարց է **հացահատիկային տնտեսության** կազմակերպումը: Հացահատիկը հիմնականում մշակվում է Շիրակի և Գեղարքունիքի (21%) ու Սյունիքի (11%) մարզերում: Ի տարբերություն մյուս ճյուղերի, հացահատիկի արտադրությունը չի կենտրոնացված նրա զարգացման համար համեմատաբար բարենպաստ պայմաններ ունեցող գոտիներում, այլ տեղաբաշխված է հանրապետության ամբողջ տարածքում: Գյուղացուն ավելի հեշտ է մշակել հացահատիկ, որի համար ինչպես աշխատանքային, այնպես էլ նյութական ծախսերը մնացած մշակաբույսերի հետ համեմատած, ավելի փոքր են:

Հացահատիկը էժան կերասննդի ստացման աղբյուր է հանդիսանում, իսկ հացի ու հացահատիկի միջին կալորիականությունը կազմում է շուրջ 1800-2200 կալորիա, ալյուրինը՝ մինչև 3000, որը հավասարվում է տավարի մսի կալորիականությանը: Հացահատիկը բարձրարժեք կեր է նաև կենդանիների համար: Հիշենք, որ կերային արժեքը չափվում է կերամիավորներով, իսկ մեկ կերամիավորը հավասար է 1 կգ վարսակի ալյուրից ստացված էներգետիկ արժեքին: Հացահատիկը, որն ունի ամենամեծ ռազմավարական նշանակությունն ամբողջ աշխար-

հում, մեր հանրապետության պահանջմունքները դրա նկատմամբ բավարարվում է շուրջ 45 տոկոսով, իսկ թերությունները ու բացթողումները այդ կարևորագույն արտադրական ճյուղում՝ մեծաքանակ են:

Այս ճյուղի գլխավոր խնդիրներն են՝ անհրաժեշտ տեսակներով հացահատիկի արտադրության ավելացումը, պահանջարկի հնարավոր առավելագույն չափով բավարարումը, ներմուծումների ծավալների նվազեցումը, հացահատիկային տնտեսությունների տեխնոլոգիական շղթայի նորացումը, որոնք համապատասխան փոփոխություններ կպահանջեն հացահատիկի արտադրության կառուցվածքում: Աստիճանաբար հնարավորություն է ստեղծվում սեփական արտադրության հաշվին լուծելու գյուղացիական տնտեսությունների հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացման, սորտաբարմացման և սերմապահովվածության խնդիրները:

Թիվ 1 և 2 աղյուսակներում, որոնք կազմված են՝ վիճակագրական տվյալների ու ռազմավարության ծրագրի ցուցանիշների հիման վրա, բերված են տվյալներ՝ հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների վերաբերյալ (ըստ տարիների) ու նույն ձևով ցուցանիշներ՝ հիմնական մշակաբույսերի փաստացի և կանխատեսվող համախառն բերքի ու բերքատվության մասին:

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները կընդարձակվեն հատկապես պտղի գծով՝ 174,3%-ով: Կավելանան նաև խաղողի, կարտոֆիլի և բանջարեղենի ցանքատարածությունները (աղ. 1):

Աղյուսակ 1.

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները ըստ տարիների (հազ. հա)

Մշակաբույսեր	1985	1990	1995	2000	2004	2006	2010	2015	2015թ. %		
									1995	2006	2010
Հացահատիկային	135.6	138.2	174.8	181.1	206.4	182.4	187.5	185.0	105.8	101.4	98.7
Կարտոֆիլ	19.9	22.4	32.6	34.2	35.7	33.1	34.0	35.0	107.4	105.7	102.9
Բանջարեղեն	18.0	18.0	21.1	20.0	22.3	24.4	24.0	25.0	118.5	102.4	104.2
Բոստանեղեն	3.3	4.8	3.3	3.4	4.0	4.0	4.1	4.1	124.2	102.5	100.0
Պտուղ	53.4	50.2	34.4	22.8	34.7	35.4	32.0	61.7	179.4	174.3	192.8
Խաղող	32.7	29.2	23.2	15.0	14.9	15.8	20.2	26.4	113.8	167.0	130.7
Ընդամենը	176.8	262.8	289.4	276.5	318.0	310.2	367.0	446.1	154.1	143.8	121.5

Եթե 2006թ. միջինով հացահատիկի համախառն բերքը կազմել է 212,5 հազ.տ, իսկ բերքատվությունը կազմել է 13,3 ց/հա, ապա ՀՀ Կառավարության կողմից ընդունված ռազմավարության ծրագրի հաշվարկների համաձայն 2015թ., որն այսուհետև կանվանվի հաշվարկային տարի, կկազմեն 529,1 հազ. տ և 28,6 ց/հա: Ամը կկազմի համախառն բերքինը՝ 249,0 տոկոս, բերքատվությունը՝ 215,0 տոկոս (աղ.2): Նշենք, որ հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները ներկայիս 195 հազ. հա-ից չեն ընդարձակվի, այլ կբարձրանա դրանց բերքատվությունը (աղ. 2):

Աղյուսակ 2.

Հիմնական մշակաբույսերի համախառն բերքի և բերքատվության դինամիկան ըստ տարիների

Մշակաբույսեր	Չափի միավոր	1985	1990	1995	2000	2004	2006	2010	2015	2015թ. %		
										1995	2006	2010
Հացահատիկային	հազ. տ	283.5	271.0	262.7	224.8	446.2	212.5	451.9	529.1	201.4	249.0	117.1
	ց / հա	20.9	19.6	15.0	13.7	22.1	13.3	24.1	28.6	190.6	215.0	118.7
Կարտոֆիլ	հազ. տ	305.8	212.5	427.7	290.3	576.4	539.5	470.5	595.0	139.1	110.3	126.5
	ց / հա	153.7	94.8	131.2	87.3	161.3	163.4	170.5	195.0	148.6	119.3	114.4
Բանջարեղեն	հազ. տ	619.6	389.7	450.9	375.7	600.8	780.0	699.8	805.0	178.5	103.2	115.0
	ց / հա	339.0	216.4	208.2	189.1	269.7	309.8	291.6	322.0	154.7	103.9	110.4
Բոստանեղեն	հազ. տ	60.8	31.4	54.0	52.8	113.1	134.9	105.3	122.1	226.1	90.5	115.9
	ց / հա	184.2	65.2	163.2	156.1	280.3	335.2	256.8	297.8	182.5	88.8	116.0
Պտուղ	հազ. տ	165.2	155.5	146.1	128.5	113.6	286.0	163.2	236.8	162.1	82.8	145.0
	ց / հա	45.8	42.6	43.3	58.8	39.1	93.9	68.0	74.0	170.9	78.8	108.8
Խաղող	հազ. տ	251.6	143.6	154.9	115.8	148.9	201.4	193.8	246.0	158.8	122.1	126.9
	ց / հա	95.8	57.8	67.8	78.0	108.9	141.2	114.0	120.0	177.0	85.0	105.3

Ծրագրվող ժամանակաշրջանում (մինչև 2015թ.) հանրապետության կարտոֆիլագործության զարգացման հիմնախնդիրը՝ կարտոֆիլով բնակչության պահանջների լրիվ բավարարումն է, որակի բարձրացումը և կորուստների առավելագույն կրճատումն է: Բարձրարժեք սննդամթերք է, ինտենսիվ մշակաբույս, զբաղեցնում է ցանքատարածությունների մոտ 10 տոկոսը, ապահովելով հանրապետության բուսաբուծության համախառն արտադրանքի շուրջ 30 տոկոսը: Օգտագործվում է նաև տեխնիկական նպատակներով: Կարտոֆիլը փաստորեն, հանրապետության երկրորդ պարենային մթերքն է, որի ռազմավարական նշանակությունը նույնպես շատ մեծ է:

Կարևոր նշանակություն ունի վաղահաս կարտոֆիլի արտադրության ավելացումը՝ տեղական օգտագործման և արտաքին շուկա արտահանման համար: Եթե 2006թ. կարտոֆիլի համախառն բերքը կազմել է 539,5 հազ.տ, իսկ բերքատվությունը՝ 163,4 ց/հա, ապա հաշվարկային տարում դրանք կկազմեն համապատասխանաբար 595,0 հազ. տ և 195 ց/հա: Ցանքատարածությունները ներկա 35 հազ. հա-ի սահմաններում կպահպանվեն և հետագայում, իսկ բերքատվությունը կավելանա՝ 119,3%-ով:

Բարձր բերքի ապահովման հիմնական ուղղությունները կլինեն՝ կարտոֆիլի արտադրության ինտենսիվ այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք կհամապատասխանեն հանրապետության տարբեր հողակլի-

մայական պայմաններին, ինչպես նաև կարտոֆիլի բարձր բերքատու սորտերի ստացումը, սերմնաբուծության արմատական բարելավումը:

Բանջարաբոստանային ճյուղի գլխավոր խնդիրը բանջարաբոստանային լայն տեսակներով արտադրանքի նկատմամբ սեփական արտադրության հաշվին հանրապետության բնակչության և վերամշակող արդյունաբերության ապահովումն է, ինչպես նաև դեպի արտաքին շուկա ապրանքափոխանակության համար թարմ կամ վերամշակված վիճակում արտադրանքի արտահանման մեծացումը:

Բանջարեղենի արտադրությունը հիմնականում բավարարում է հանրապետության բնակչության և վերամշակող արդյունաբերության պահանջները: Իհարկե, շատ ռեզերվներ կան, այդ թվում՝ ջերմոցային տնտեսությունների վերականգնման կարևոր խնդիրը, որը ձմռանը կթեթևացնի բնակչությանը բանջարեղենով ապահովման գործում:

ՀՀ գյուղատնտեսության համար մշակվել է զարգացման ռազմավարություն, բայց ոլորտի յուրաքանչյուր ճյուղն էլ պետք է իր զարգացման ռազմավարությունն ունենա, որում հաստատագրված լինեն և իրականացվելիք գործառույթները, դրանց կատարման ժամկետները, և վերահսկողության ու պատասխանատվության մեխանիզմները:

Եթե վերնշված ճյուղերի զարգացումն ընթանում է որոշ հաջողություններով, ապա այգեգործությունը դեռևս զգալի ծանր վիճակում է, որտեղ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Պտղաբուծություն: Հանրապետության համար արդյունավետ և հեռանկարային ճյուղ հանդիսանալով, դրա արդյունավետ վարման դեպքում պտղատու այգու մեկ հեկտարից մոտ 2 անգամ ավելի զուտ եկամուտ է ստացվում, քան դաշտային ու բանջարանոցային մշակաբույսերի նույնաչափ տարածքից: Հանրապետությունում առկա 25,7 հազ. հա պտղատու այգիներից, որոնք կենտրոնացված են գյուղացիական և բնակչության օժանդակ տնտեսություններում, հնդավորներին բաժին է ընկնում 52,8, կորիզավորներին՝ 44,9 և մերձարևադարձային կուլտուրաներին՝ 0,8 տոկոսը: Մնացածը բաժին է ընկնում հատապտուղային կուլտուրաներին: Այգիների մի չնչին մասը (0,38%) գտնվում է կոոպերատիվ տնտեսություններում:

Չնայած պտղաբուծության ակնհայտ առավելություններին, բազմաթիվ հայտնի պատճառներով ճյուղում ստեղծվել է ծանր վիճակ՝ պտղի արտադրության ծավալները 2006թ. կազմել են միայն 286,0 հազ.տ., իսկ բերքատվությունը 93,9գ/հա: Ճիշտ է 1991-2000թթ. այգիների քանդման և ոչ կանոնավոր խնամքի հետևանքով, հանրապետության գյուղատնտեսությունը զրկվել է շուրջ 90 մլրդ. դրամ արժողությամբ հիմնական արտադրական միջոցներից, այնուամենայնիվ պտղաբուծության զարգացման հնարավորությունները մեծ են:

Որպես արտադրության վարման արդյունավետության բարձրացման կարևորագույն ուղի, անժխտելի է ճյուղի խոշոր արտադրության կազմակերպման առավելությունը զանազան ճանապարհներով: Առավել արդյունավետը պտղաբուծության պարագայում՝ կոոպերացիայի զանազան ձևերն են ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց:

Խաղողագործությունը հանրապետության գյուղատնտեսության ավանդաբար առաջատար ճյուղերից է, որի դերը տնտեսության էկոնոմիկայում նշանակալից է: Բուսաբուծության համախառն արտադրանքում խաղողի տեսակարար կշիռը վերջին տարիներին կազմել է 9-10 տոկոս:

Հայտնի է, որ խաղողը աշխատատար մշակաբույս է և նպաստում է բնակչության որոշակի մասի զբաղվածության ապահովմանը: Մոտավոր հաշվարկներով դրա մշակությամբ զբաղվածների թիվը տատանվում է 25-27 հազար աշխատողի սահմաններում: 1990թ. հետո խաղողագործությունը, հետևաբար և գինեգործությունը պարզապես անկում ապրեցին, կրճատվեցին տարածությունները, խաղողի համախառն բերքը և վերամշակման ծավալները: Այսպես, խաղողի այգիները 1990թ. կազմում էին 29,2 հազ. հա, իսկ 2003թ. դրությամբ դրանք նվազեցին ավելի քան 2 անգամ՝ կազմելով 13,1 հազ. հա: 2006թ. դրանք փոքր ինչ ավելացել են և կազմել են 15,8 հազ. հա:

Չնայած դրան, վերջին մի քանի տարում հանրապետությունում լուրջ ուշադրություն է դարձվում խաղողագործության զարգացմանը, ակնհայտ են ճյուղի կայունացման և զարգացման միտումները: Խաղողի տնկարկների տարածությունները ներկայիս 14 հազ.հա-ից կավելանան և կկազմեն 26,4 հազ.հա: 2007թ. հունվարի 1-ի տվյալներով, խաղողի համախառն բերքը կազմել է 201,4 հազ.տ., իսկ միջին բերքատվությունը 23,9 գ/հա: Հաշվարկային տարում զգալի կավելանա խաղողի արտադրությունը:

Ինչ վերաբերում է արտադրանքի գներին, ապա շուկայական պայմաններում խաղողագործը և գինեգործը իրենք են սահմանում գները, հաշվի առնելով պահանջարկը, մրցակցությունը և սեփական շահերը: Խաղողի շուկան հանրապետությունում նպատակահարմար է բաժանել երկու մասի՝ խաղողի վաճառք վերամշակման համար և վաճառք բնակչությանը:

Ամփոփելով վերը բերված տվյալները,կարելի է նշել, որ ուրվագծվել են առաջիկա 8 տարիների գյուղատնտեսության հիմնական ճյուղերի հնարավոր զարգացումների շրջանակները: Ինտենսիվ ձևով կզարգանան ինչպես բուսաբուծությունն, այնպես էլ անասնաբուծությունը:

Բուսաբուծությունում նախատեսվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատումը՝ ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգերի ներդրման միջոցով: Առաջնային է դառնում ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը, որը թույլ կտա ավելացնել ստացվող եկամուտը՝ միավոր տարածությունից:

2. Անասնապահության զարգացումը: Այս ճյուղի հետագա զարգացումը նախ կապված է **կերային բազայի** արմատական բարելավման հետ: Կերային բազան հանդիսանալով անասնաբուծության արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոց, գտնվում է նրա հետ փոխադարձ կապի մեջ և անասունների մթերատվությունն ու մթերքների ինքնարժեքը ուղիղ համեմատական են կերերի քանակին ու որակին: Փաստորեն, որքան լիարժեք է անասունների կերակրումը, այնքան բարձր է դրանց մթերատվությունը և ցածր՝

մթերքների ինքնարժեքը ու պահանջվում է, որ յուրաքանչյուր տնտեսության անասունների առկա գլխաքանակի համեմատ, կերի բազան զարգանա ամենաբարձր տեմպերով:

Այն, որ կերարտադրությունը գտնվում է անմխիթար վիճակում, արդեն հայտնի է: Եվրը ժամանակակից փուլում, դա ինտենսիվ կերարտադրության կազմակերպումն է, երբ կերերի արտադրության տեմպերը գերազանցում են անասունների աճի տեմպերին, որը հնարավորություն կտա ապահովելու անասունների լիարժեք կերակրումը:

Աղյուսակ 3.

Հիմնական մթերքների համախառն արտադրանքի և անասունների մթերատվության դինամիկան ըստ տարիների

Մթերքներ	Չափի միավոր	1985	1990	1995	2000	2006	2010	2015	2015թ. %		
									1995	2006	2010
Միս	հազ. տ	99.8	92.8	82.4	88.8	147.1	130	160	194.2	108.8	123.1
Կաթ	հազ. տ	5139.3	441.9	428.3	452.1	620	755	944.0	220.5	152.2	125.0
	մեկ կովի միջին կաթնատվութ. կգ	1633.0	1540	1525	1668	1877	2200	2500	163.9	133.2	113.6
Ձու	մլն. հատ	531.6	517.9	195.6	385.4	463.7	1312.0	1776.0	907.9	383.0	135.4
	մեկ հավի ձվատվություն, հատ	79.0	108	85	108	145	205	222	261.2	180.1	108.3
Բուրդ	տոննա	60.8	31.4	54	52.8	130.0	105.3	122.1	226.1	81.0	115.9
	մեկ միավորի բրդատվություն, կգ	2.1	2.3	2.4	2.4	2.2	2.4	2.5	104.2	113.6	104.2

Թիվ 3 աղյուսակում ներկայացված է անասնապահական մթերքների համախառն արտադրանքի և անասունների մթերատվության դինամիկան ըստ տարիների, որտեղ 2015թ. մսի արտադրությունը նախատեսվում է ավելացնել 108,8 տոկոսով, կաթինը՝ 152,2 տոկոսով, ձվինը՝ 3,8 անգամ և բրդինը՝ 105,8 տոկոսով: Մեկ կովի կաթնատվությունը կավելանա 133,2 տոկոսով, մեկ հավի ձվատվությունը՝ 180,1 և մեկ ոչխարի բրդատվությունը՝ 113,1 տոկոսով:

Հիմնական միջոցառումների իրագործման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ հենվելով սեփականության բազմաձևության և բազմակացութաձև տնտեսավարման վրա, անհրաժեշտ է բարձրացնել ճյուղի արդյունավետությունը, զգալիորեն ավելացնել տեղական արտադրության անասնաբուծական մթերքներով բնակչության մատակարարումների ծավալները: Խնդրի լուծումը ենթադրում է անասնաբուծության նպատակահարմար կառուցվածքային տեղաշարժերի իրականացում, արտադրության նոր տեխնոլոգիաների ներդրում ու յուրացում, զարգացման համալիր ծրագրերի մշակում և իրականացում, հաշվի առնելով հանրապետության ռեսուրսային հնարավորությունները, վարվող ֆինանսական, գիտատեխնիկական, ագրարային քաղաքականությունը:

Տավարաբուծությունը կա և կմնա որպես անասնաբուծության առաջատար ճյուղ: Վերջինիս զարգացման միջոցառումներում անհրաժեշտ է նախատեսել կերակրման բարելավման միջոցով կովերի ստերջության զգալի կրճատում, գլխաքանակի պահպանության ապահովում ու մթերատվության աճ, ինչպես նաև գյուղացիական տնտեսություններում անասունների փոքր խմբերով պահպանման համար՝ համապատասխան պայմանների ստեղծում:

Ինչ վերաբերում է **ոչխարաբուծությանը**, ապա դա անասնաբուծության այն ճյուղն է, որը բոլոր պայմաններն ունի զարգանալու՝ սեփական կերային բազայի հաշվին: Մեր կարծիքով, լավ արդյունք կարող է տալ վարկերի և այլ միջոցների աջակցությամբ ունեցած արոտավայրերի օգտագործման ծառայությունը՝ համայնքների, գյուղացիական միավորումների և կոոպերացման այլ կազմակերպման ձևերի գործունեության ճանապարհով: Հանրապետությունում կարող են ստեղծվել նման մարզային ծառայություններ, որոնց պահպանումը կարելի է ապահովել աշխատավարձի հաշվին, տնտեսավարկային հիմունքներով:

Հանրապետությունում մսի պահանջարկն ապահովելու գործում կարևորագույն դեր կարող է ունենալ **խոզաբուծությունը**, որպես վաղահաս, բարձր մթերատու և արդյունավետ ճյուղ: Խոզաբուծության զարգացման ոլորտում առանձնակի դեր ունի հանրապետության հյուսիսային և հյուսիս-արևելյան տարածաշրջանը:

Հեռանկարում կփոխվի խոզաբուծության տեղաբաշխումը, առավել համամասնորեն կտեղաբաշխվի տարածաշրջանների միջև և չմասնագիտացված տնտեսության պայմաններում, մեկ գյուղացիական տնտեսությունն իրական հնարավորություն կունենա աճեցնել տարեկան 7-8 խոզ, թույլ մասնագիտացված տնտեսությունը՝ մինչև 18-20 խոզ:

Թռչնաբուծությունն աստիճանաբար վերականգնվում է և ներկայումս թռչունների գլխաքանակը տեղաբաշխված է բոլոր մարզերում ու համայնքներում ու հիմնականում բավարարում է տեղական գյուղական բնակչության կարիքները: Հեռանկարում, որպես անասնաբուծության կարևոր ճյուղ, թռչնաբուծությունը փոքր գլխաքանակներով տարածում կգտնի գրեթե բոլոր գյուղացիական տնտեսություններում: Թռչնաբուծությունը, նրա արտադրությունը կզարգանա լայն թափով, կգործեն համեմատաբար խոշոր թռչնաբուծական կամավոր միություններ, բաժնետիրական ընկերություններ, առանձին թռչնաֆաբրիկաներ, գյուղացիական տնտեսություններում էլ կաճեցվեն տեղական պայմաններին համապատասխանող, կերակրման ու պահվածքի նկատմամբ մեծ պահանջներ չներկայացնող ցեղեր: Նախատեսվում է 2015թ. թռչունների գլխաքանակը 3 մլն. 800 հազարից հասցնելու շուրջ 10 մլն-ի:

Զարգացման լայն հնարավորություններ ունի հանրապետության ձկնաբուծությունը: Բնակչությանը ձկնամթերքով ապահովման, ձկնաբուծության էկոնոմիկայի կառավարման շահերը, անկախ սեփականության

ձևից, պահանջում են, որ հանրապետությունում լրիվ հաշվառման ենթարկվեն ձկան որսն ու իրացումը, տնտեսությունների միջոցները, ծախսումներն ու եկամուտները: Այդ տեսակետից, առանձին դեպքերում հավատ չեն ներշնչում ձկան արտադրության հաշվետու տվյալները որոնք մեր կարծիքով, ցածր են փաստացի եղածից, և մեղմ ասած հիմնականում ձկան անօրինական որսի պատճառով:

Անասնաբուծության ինտենսիվ զարգացման դեպքում, սպասվող ցուցանիշներն անհամեմատ կարող են ավելին լինել, որը հնարավորություն կտա աստիճանաբար կրճատել առանձին մթերքների ներմուծումը արտերկրներից:

Անասնաբուծության նշանակությունը չի սպառվում արժեքավոր սննդամթերքների՝ մսի, կաթի, ձվի ստացումով, շատ կարևոր են բարձրորակ հումքի՝ բրդի, կաշվի, մորթու ստացումը, գյուղատնտեսական կենդանիների իբրև բանող ուժի օգտագործումը, օրգանական պարարտանյութերի, բժշկության և անասնաբուժության մեջ բազմաթիվ դեղամիջոցների, կենդանական ծագում ունեցող կերերի և կերային հավելումների ստացումը: Հեռանկարում,մեր կարծիքով, հանրապետության անասնապահությունը գլխավորապես կարող է զարգանալ արտադրության ինտենսիվացման հզոր լծակի օգտագործման միջոցով և աստիճանաբար ենթարկվելով արմատական քանակական ու որակական դրական փոփոխությունների:

Պարենային ապահովվածությունը: Տարիներ շարունակ հանրապետություն է ներկրվում մեծ քանակությամբ սննդամթերք, հատկապես միս, կաթ, կարագ, հացահատիկ, համակցված կերեր և այլն: Ստեղծված իրավիճակում հանրապետությունում ծառացել են պարենային ինքնաապահովվածության աստիճանի բարձրացման, պարենամթերքների մատակարարման բարելավման, երկրի պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները, որոնք ունեն ռազմավարական նշանակություն:

Պարենային ինքնաբավությունն այժմ կազմում է 55 տոկոս, նախատեսվում է 2010թ. այն հասցնել 63-ի, իսկ 2015թ.՝ 75 տոկոսի: Ծրագրային տարում հիմնական սննդամթերքների սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով ֆիզիոլոգիական նորմաների համեմատ կկազմեն հացահատիկը՝ 119,8 տոկոս, բանջարեղենինը՝ 207 տոկոս: Չնայած աճին, հայտնի պատճառներով, դեռևս նորմայից ցածր կլինի պտղի ու խաղողի սպառումը (64,1 տոկոս), մսինը (52,2 տոկոս), կաթինը՝(65,3 տոկոս):

Առաջիկա տարիներին ռազմավարական հիմնախնդիր է հանդիսանում տեղական արտադրության հնարավորությունների գործադրմամբ բնակչության պարենային ապահովվածության աստիճանի բարձրացումը, պարենամթերքների մատակարարման նշանակալի բարելավումը, երկրի պարենային անվտանգության ապահովումը:

Խնդիր է դրվում՝ մշակել և իրագործել մի շարք հայեցակարգային մոտեցումներ, ուղղված՝ սննդամթերքների ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացմանը, սննդի անվտանգության ու հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովմանը:

Ներկայումս հանրապետության պարենային անվտանգությունը դիտվում է որպես էկոնոմիկայի մի այնպիսի բնագավառ, որտեղ անկախ համաշխարհային շուկայում տիրող կոնյուկտուրայից, մի կողմից երաշխավորվում է բնակչության համար գիտականորեն հիմնավորված չափանիշներով պարենամթերքների համապատասխան քանակի արտադրություն (առաջարկ), մյուս կողմից պայմաններ են ստեղծվում, որպեսզի սպառման մակարդակը (պահանջարկ) համապատասխանի բժշկական նորմերին: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում արտադրանքի իրացման գործընթացի կազմակերպման հետազոտումը, որի արդյունքը կարող է դառնալ հանրապետության ագրարային քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը:

Բոլոր դեպքերում, առաջիկա 8 տարիների ընթացքում զգալի կբարձրանան գյուղատնտեսական արտադրության հիմնական ցուցանիշները, կավելանան սննդամթերքների սեփական արտադրության ծավալները, վերելք կապրի գյուղատնտեսությունն իր գլխավոր ճյուղերով:

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և մասնագիտացման հարցերը կապելով գյուղատնտեսության հիմնական ճյուղերի հետագա զարգացման հետ, նշենք, որ գյուղատնտեսական արտադրության **տեղաբաշխումը** ագրոպարենային համակարգի կառուցվածքում ուղեկցվում է արտադրության մասնագիտացման և միջշրջանային համալիրների ձևավորման հիմնական ուղղությունների որոշմամբ: Արտադրության ծավալներն ու անվանացանկը, տնտեսությունների մասնագիտացման մակարդակը, մասնագիտացված ենթաճյուղերի և ճյուղերի կառուցվածքը կախված են շատ գործոններից ու պայմաններից, մասնավորապես՝ հողի գնահատականից, աշխարհագրական դիրքից, արտադրության տարածքային կազմակերպումից, էներգետիկ ռեսուրսների առկայությունից, արտադրական ուժերի զարգացման տեմպերից, աշխատանքային և բնական ռեսուրսների օգտագործման աստիճանից և այլն:

Տնտեսությունները, ձեռնարկությունները, կազմակերպությունները, մարզերը, մարզատարածքները պետք է աշխատեն գյուղատնտեսական արտադրությունը զարգացնել համալիր ձևով և իրենց տնտեսությունները մասնագիտացնեն երկրագործության ու անասնապահության արտադրանքի մի քանի գլխավոր տեսակների արտադրության ուղղությամբ, դրա հետ միասին ավելի լայնորեն զարգացնելով ներտնտեսային մասնագիտացումը, արտադրելով տարբեր տեսակի մթերքներ, օգտագործելով արտադրության ավելի ռացիոնալ տեղադրման առավելությունները: Ավելացնենք, որ ներտնտեսային մասնագիտացումն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, օգնում է ավելի արդյունավետ օգտագործելու յուրաքանչյուր տնտեսության բնական և տնտեսական պայմանները, որը նպաստում է նաև աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Խորհուրդ չենք տալիս միևնույն տնտեսությունում ունենալ թեկուզ փոքր աշխատատար ճյուղեր, հատկապես այն դեպքում, երբ նրանց մշակության և խնամքի աշխատատար պրոցեսների ժամկետները համընկնում են: Վատ չէ նաև, երբ տնտեսությունն արտադրում է մեկ կամ երկու տեսակի արտադրանք, կիրառում է մեքենայացում, ստանալով արդյունավետ շահութաբերություն: Տարբերակները շատ են:

Այժմ խնդիր է դրվում մշակել և կիրառել այնպիսի համալիր միջոցառումներ, որոնք արտադրության ճիշտ տեղաբաշխման և մասնագիտացման գործընթացի արդյունքում կարող են նպաստել հանրապետության

ոլորտում տնտեսական բարեփոխումների որակապես նոր մակարդակով շարունակմանը, կատարելագործմանը, խորացմանը և առաջնահերթ հիմնախնդիրների լուծմանն ու խոչնդոտների հաղթահարմանը:

ՀՀ գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մեր կարծիքով, պետք է ընթանա արտադրության չափերի խոշորացման միջոցով՝ կոոպերատիվ շարժման և ֆերմերային ապրանքային տնտեսությունների ստեղծման միջոցով: Դրանից ավելի հեռանկարային և նպատակահարմար արտադրության զարգացման ու իրացման երաշխիքը կարող են լինել կոոպերացիայի կազմակերպման առաջավոր ձևերը: Այստեղ կարևոր դեր կարող են ունենալ՝ գյուղատնտեսության կազմակերպման ու կառավարման բնագավառի իրավական դաշտի ձևավորումն ու կատարելագործումը, կոոպերատիվների վարկավորման մեխանիզմների հստակեցումը, պարզեցումը, կատարելագործումը, գյուղատնտեսական ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կոոպերացման սկզբունքների ուսուցման և վերապատրաստման համակարգի զարգացումը: Միջազգային փորձի կիրառումը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գյուղատնտեսական կոոպերացիայի ձևավորման և զարգացման գործընթացի համակարգված աջակցության ու խթանման առկայությունն այսօր առաջնային և գլխավոր խնդիրներից մեկն է ՀՀ մարզերում:

Նոր պայմաններում տնտեսական կարևոր խնդիրներից է ագրոարտադրական ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը, որոնց համակարգում անվիճելի է հողային ռեսուրսների առաջնակարգ նշանակությունը: Հողային ռեսուրսների խնայողաբար օգտագործման հիմնախնդիրը հրատապ է հանրապետության սակավահող և, առաջին հերթին, լեռնային ու նախալեռնային մարզատարածքների համար, որտեղ հողատեսքերի չափերն ու ուրվագծային ձևերին համապատասխան, գյուղատնտեսական արտադրության կազմակերպման տարածքա-բազմազան եղանակների ճիշտ ընտրությունը և ագրոարտադրական նպատակներով յուրաքանչյուր միավոր հողատարածքի օգտագործումը ձեռք է բերում հեռանկարային ու գիտապրակտիկ նշանակություն:

Չնայած եղած դժվարություններին, ՀՀ մարզերում և մարզատարածքներում հողի շուկայի գոյությունը հողի մասնավոր սեփականության պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է և կան հիմքեր եզրակացնելու, որ մոտակա տարիներին այն կկայանա ու կաշխուժանա, գրավելով իր կայուն տեղը՝ տնտեսական հարաբերությունների համակարգում, բխելով պետական, տեղական ինքնակառավարման, իրավաբանական, ֆիզիկական անձանց շահերից:

Գյուղատնտեսության ճյուղերի հեռանկարային կանխագուշակումն ընդգրկում և բնութագրում է այդ ոլորտի առանձին ճյուղերի զարգացման ընթացքը, հեռանկարային հաշվարկները, ծրագրային խնդիրները, բարեփոխումների առանձնահատկություններն ու հնարավորությունները: Յուրաքանչյուր ճյուղ, հիմնականում միևնույն արտադրանքը թողարկող տնտեսությունների կամ ձեռնարկությունների ամբողջությունն է և իր հարաբերական ինքնուրույնությամբ, այն ունի արտադրության կազմակերպման և կառավարման, տեխնոլոգիական որոշակի առանձնահատկություններ, որոնք ձևավորում են արտադրական, սոցիալական, տեխնիկական ճյուղային միջավայրն իր նպատակներով ու խնդիրներով:

Համաշխարհային տնտեսության մեջ, հատկապես վերջին տասնամյակում կատարվող տեղաշարժերը պայմանավորված են այսպես կոչված «բարձր տեխնոլոգիաների» և հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ: Փաստորեն, տեխնոլոգիական առաջընթացը հանգուցային այն ռեսուրսն է, որն ի վիճակի է նպաստել անցումային փուլում գտնվող Հայաստանի տնտեսության արդիականացմանը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները նաև նոր հնարավորություններ են ստեղծում ՀՀ մարզերում աշխատանքի և զբաղվածության կազմակերպման նոր ձևերի կենսագործման համար:

Վերը նշված և այլ միջոցառումների իրականացումը կարող է նպաստել ՀՀ գյուղատնտեսության համակարգի զարգացմանը խոչնդոտող խնդիրների լուծմանը, հետևաբար նաև ագրոպարենային համակարգի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, արտադրության ծավալների ավելացմանը, արդյունքում նաև երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը:

ՍԵՐԳԵՅ ՂԱՋԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն գիտական գծով տ.գ.դ., պրոֆեսոր
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀՀ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ներկա անցումային փուլում, հանրապետությունում ավելի է մեծացել շուկայագիտության դերը, նրա ազդեցությունը շուկայի վրա, երբ տնտեսության մեջ կատարվող որոշակի իրական գործընթացները, տնտեսական հարաբերությունների փոփոխվող պայմանները, կառավարման նոր մոտեցումներն ու կառուցվածքային փոփոխությունները նոր պահանջներ են առաջադրում մարքեթինգային գործունեությանը, որը միջոցառումների մի ամբողջական համակարգ է, ուղղված լինելով արտադրողից մինչև սպառողը առկա բոլոր օղակների աշխատանքների համակարգմանը՝ նպատակ հետապնդելով ապահովելու արտադրողների ու ծառայությունների շահավետ գործունեությունը և սպառողների պահանջմունքների բավարարումը: Նշված հիմնահարցերը մեզ